ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՆԱՍՅԱՆ. Օսմանյան կայսրությունում, Թուրքիայի Հանրապետությունում և հարակից տարածքներում բռնաճնշումների և ցեղասպանության ենթարկված հայ բժիշկներ: Համառոտ կենսագրական բառարան, *Երևան, «Լուսաբաց», 2014, 520 էջ:*

Վերջերս լույս է տեսել «Օսմանյան կայսրությունում, Թուրքիայի Հանրապետությունում և հարակից տարածքներում բռնաճնշումների և ցեղասպանության ենթարկված հայ բժիշկներ: Համառոտ կենսագրական բառարան» գիրքը: Հեղինակն է բժիշկ-հոգեբույժ Հարություն Մինասյանը: Այս գիրքը նրա կազմած ու տպագրած վեցերորդ կենսագրական բառարանն է[1]:

Գրախոսվող աշխատությունն ընդգրկում է ոչ միայն վերջին երկու դարերի ժամանակամիջոցում ապրած, աշխատած, ազգությամբ հայ բժիշկների կենսագրությունը, այլև բուժակների, ինքնուս բժիշկների՝ ժողովրդական լեզվով ասած հեքիմների, սնոչիների, դեղագործների, անասնաբույժների գործունեությունը, որոնք աշխատել ու իրենց կյանքը մեծ մասամբ ավարտել են Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի իշխանության ներքո գտնվող բնակավայրերում: Գրքում հիշատակված արևելահայ սակավաթիվ բժշիկները քաղաքական հանգամանքների բերումով մի կարճ ժամանակամիջոց հայտնվել են թուրքական իշխանությունների ազդեցության տակ (Աղամիրզով, Կարագեդով և այլն): Թերևս ժամանակագրական առումով բացառություն է կազմում Ամիրդովլաթ Ամասիացուն սույն բառարանում զետեղելը: Պետք է նկատի ունենալ, որ արևմտա-

[1] *Հ. Մ ի ն ա ս յ ա ն. 100 հայ հոգեբույժներ, գ. Ա – Ե, Երևան, 2002–2010:*

հայ բժշկագիտությունը իրապես սկիզբ է առել Ա. Ամասիացուց (XIVդ. – 1496 թ.):

Ներկայացվող գիրքը բավական ծավալուն է՝ բաղկացած 520 էջից: Ժանրին բնորոշ առանձնահատկությամբ յուրաքանչյուր անհատ ներկայացված է համառոտ կենսագրությամբ, երբեմն, անհրաժեշտության դեպքում ընդարձակ տրված են կենսագրության աղբյուրները՝ տպագիր, ձեռագիր, նրանց ինքնուրույն աշխատությունները՝ տպագիր, ձեռագիր, լուսանկարը, հասարակական-ազգային, զինվորական, կրթական գործունեության ոլորտները, ստացած պարգևները, կոչումները և այլն: Այս ձևաչափով գրքում ներառված է շուրջ 500 անհատ:

Հ. Մինասյանն աշխատության վերջում ներկայացրել է իր օգտագործած հիմնական աղբյուրների ցանկերը՝ 107 միավոր. հայերեն, ֆրանսերեն – 2, ռուսերեն – 7, անգլերեն – 4, թուրքերեն – 4, 27 անուն հայերեն մամուլ, օրացույց, տարեցույց, լրագիր և 7 միավոր անհատական հուշեր, նամակներ:

Անհրաժեշտ, ժանրին բնորոշ տվյալներից բացի՝ կենսագրական բառարանը պարունակում է տեղեկություններ մեր գերյալ հայրենիքի մի շարք գավառների, բնակավայրերի ժողովրդագրության, ազգագրության վերաբերյալ: Բանն այն է, որ հայերեն լեզվով հրատարակված աղբյուրների հեղինակները գերազանցապես բնիկներ են, քաջատեղյակ հայրենի բնաշխարհին (Երզնկա, Սիվրիհիսար, Կարին, Արաբկիր, Մարաշ, Կեսարիա, Խարբերդ, Շմշկածագ և այլն):

Աշխատությունը զուրկ չէ թերություններից՝ լեզվական, խմբագրական, որոնք հետևանք են անուշադրության, անփութության:

Հ. Մինասյանի խնդրո առարկա գիրքը Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված արժանի գործ է, զոհեր, ովքեր իրենց գիտելիքները, ունակություններն ու կյանքը ի սպաս դրին մարդուն՝ անկախ ազգությունից, բայց որոնց գոյությունը դաժանորեն ընդհատվեց:

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ